

գլխեր. գուցէ Հաքէմի օրով (1010): 670ին Արգուլֆի ուխտաւորութեան ժամանակ եկեղեցին կանգուն էր տակաւին: Այս թուականին բեկէնիին չորցած ծառը մէկ մասովը տակաւին գոյութիւն ունէր. բոլոր երկիրներէ եկող ուխտաւորները իր մասնիկներէն իրր մասունք հետերնին կը տանէին: Այս տեղւոյն սրբաւ զայրին և բեկէնիին համբաւը այնքան մեծ էր՝ որ անոնց յիշատակը երբեք չանհետացաւ: Քերրոնի հիւսիսային կողմը երեք քառորդ ժամ հեռի կը գտնուէին մասնաւոր տեղեր՝ որոնք կը յիշեցնէին նշանաւոր ուխտաւորութիւնը. օրինակի համար՝ Նահապետին ձորակը (հաղեղ-եղ-Պաքրաֆ), բեկէնիին խոռոչը (հաղ-շեղ-եղ-Պոսսե), Սառայի բաղնիքը (հաւնաւ-եղ-Սարա), Աբրահամու բլուրը (րաւեղ-եղ-Խալիլ):

Բամէզ-էլ-Սալիլի հնութիւնները նշանաւոր են և տակաւին կը մնան անոնց կիսափուլ շէնքերը. հնախօսներուն ըսածին նայելով՝ նոյն հնութիւնները հրակայական շէնքի մը սկզբնաւորութիւնն եղած են եւ տակաւին չգիտցուիր թէ ի՞նչ նպատակի համար հիմնարկուած են նոյն կիսատ կառուցուածքները: Այս տեղւոյն էլ-Քիմիսի անունը ևս կուտան:

Արաբացիք, ինչպէս նաև շատ մը Եւրոպացիք Բամէզ-էլ-Սալիլը կը նկատեն Հայր Աբրահամու կայանը կամ Աբրահամու նուիրական տեղը: Քերրոնէն մէկ մղոն հեռու, Երուսաղէմի ճանապարհին վրայ. Jacques de Vérone, որ 1335ին ուխտի եկած էր, հանգիպեցաւ Բամէզ-էլ-Սալիլի մնացորդ մեծ պատերուն և զանոնք նկատեց իբր մնացորդներ Աբրահամու տան: Ան կը հաստատէ թէ ծառը կտրուած էր: Եկեղեցական պատմութեանց ծանօթութեան շնորհիւ միւսնոյն աւանդութիւնը հաստատեցին՝ Ժ. Դարուն՝ ուրիշներու հետ